ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/07

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «ԽԱՉՊԱՐ» ՍՊԸ-ի կողմից 21.01.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «ԽԱՉՊԱՐ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«ԽԱՉՊԱՐ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 21.01.2019թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

««Նաիրիի ԲԿ» ՓԲԸ-ն «Քիմիական նյութերի» ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել «ՆԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2018 թ. դեկտեմբերի 10-ի թիվ 2 որոշմամբ՝ և որի հրավերի թիվ 3-րդ չափաբաժնով պահանջվում է դեղահատերի տեսքով՝ «Դիքլորիզոցիանուրաթթվի նատրիումական աղ» պարունակող ախտահանիչ նյութից 5000 հատ:

2019թ. հունվարի 9-ին կայացած նիստում «ՆԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը կազմել է թիվ 2-րդ արձանագրությունը, որի թիվ 4-րդ կետով հրավերի թիվ 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին:

2019թ. հունվարի 17-ին «Խաչպար» ՍՊԸ-ն դիմել է «ՆԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին և տեղեկացրել, որ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի

հայտը հրավերի թիվ 3-րդ չափաբաժնի մասով կազմված է գնումների գործընթացները կարգավորող մի քանի իրավական ակտերի պահանջների խախտումներով, ուստի ենթակա է մերժման:

2019թ. հունվարի 18-ին «Խաչպար» ՍՊԸ-ն ստացել է 2019թ. հուվարի 17-ով թվագրված, «ՆԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 3-րդ արձանագրությունը, որի թիվ 2-րդ կետով հրավերի թիվ 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Ջի Թի Սի» ՍՊԸ-ն, իսկ թիվ 4-րդ կետով՝ պայմանագիր կնքելու մասին որոշում է կայացվել:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

1) Համաձայն «Արտաքին Տնտեսական Գործունեության Ապրանքների միասնական Անվանացանկ»-ի՝ ախտահանիչ միջոցները դասվում են 380894 դասակարգիչով.

«ԲԱԺԻՆՎ I Քիմիական և դրա հետ կապված արդյունաբերության

Ճյուղերի արտադրանք

ԽՈՒՄԲ 38 ԱՅԼ ՔԻՄԻԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ

Ենթադիրքերի ծանոթագրություններ՝

Ծածկագիր Դիրքի անվանումը

3808 94 – ----------ախտահանող միջոցներ՝

3808 94 100 0 – – ------- չորրորդային ամոնիակային աղերի հիմքով –

3808 94 200 0 – ------- – հալոգենացված միացությունների հիմքով –

3808 94 900 0 – ------- – այլ»:

Համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) անուղղակի հարկ է, որը սույն օրենքի համաձայն վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

Համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի սահմանման՝ ԱԱՀ-ից ազատելը՝ հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է: ԱԱՀ-ից ազատվում են.....ԱՏԳ ԱԱ դասակարգչի 8432, 8433, 8434, 8436, 8701 ծածկագրերին դասվող տեխնիկայի և մասերի, 31 ապրանքախմբի ծածկագրերին դասվող պարարտանյութերի, 3808 91, 3808 92, 3808 93, 3808 94, 3808 99 ապրանքախմբի ծածկագրերին դասվող թունաքիմիկատների, գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների

սերմացուների և տնկանյութի, ինչպես նաև ԱՏԳ ԱԱ դասակարգչի 0106 41 000, 0106 90 00 90, 5305 00 000 0, 9406 00 310 0 ծածկագրերին դասվող ապրանքների իրացումը:

Այսինքն, 3808 94 ԱՏԳ ԱԱ դասակարգիչ ունեցող ապրանքախմբի ապրանքների՝ ախտահանիչ միջոցների շրջանառությունը ազատված է ԱԱՀ-ից, հարկվող շրջանառության նկատմամբ այն հաշվարկել չի կարելի, ուստի «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի հայտում հրավերի թիվ 3-րդ չափաբաժնի մասով առանձնացված տողով ԱԱՀ-ի գծով վճարվելիք գումարի չափի հաշվարկելը չի համապատասխանում «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի սահմանումների պահանջներին:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման թիվ 67 կետի սահմանումների՝ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Բողոքի պահանջը.

«Խաչպար» ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ «Նաիրիի ԲԿ» ՓԲԸ-ի «ՆԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 2019թ. հունվարի 17-ի թիվ 3 արձանագրության թիվ 2-րդ և 3-րդ կետերով հրավերի թիվ 3-րդ չափաբաժնի մասով «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին որոշումները, և դիմելով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի թիվ 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ պարտավորեցնելու «Նաիրիի ԲԿ» ՓԲԸ-ի «ՆԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու «Նաիրիի ԲԿ» ՓԲԸ-ի «ՆԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի թիվ 3-րդ չափաբաժնի մասով «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում, ինչպես նաև այդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել երկրորդ տեղը զբաղեցրած մասնակցին»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Սմբատ Բալասանյանը:

2. «ՆԱԻՐԻԻ ԲԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը դիմել է «ՆԱԻՐԻԻ ԲԿ» ՓԲԸ-ին՝ Բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն պատշաճ կերպով ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր լիազորված ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

3. ԳԲՔԱ-ԷՍ-2019/07 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ԽԱՉՊԱՐ» ՍՊԸ-ի կողմից 21.01.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ՆԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՆԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 09.01.2019թ. նիստի թիվ 2, 17.01.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությունները.

«ՆԱԻՐԻԻ ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «ԽԱՉՊԱՐ» ՍՊԸ-ն և «Ջի Թի Սի» ՍՊԸ–ն:

Աճուրդի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածով՝ Աճուրդի 3-րդ չափաբաժնով նախատեսված գնման առարկայի տեխնիկական բնութագրով «Պրեսեպտ ինդիկատոր-թեստ» ապրանքատեսակի մասով սահմանվել են հետևյալ հատկանիշները. «դիքլորիզոցիանուրաթթվի նատրիումական աղ, չափի միավորը՝ դեղահատ»:

Հանձնաժողովի 09.01.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «ՆԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնի մասով ներկայացված վերջնական ընդհանուր գնային առաջարկը կազմել է 58,200 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն (արժեք (48,500)+ ԱԱՀ(20%)=58,200):

Նույն արձանագրության 4-րդ կետով Հանձնաժողովը որոշել է «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ Աճուրդի 3-րդ չափաբաժնի մասով:

Այնուհետև, Հանձնաժողովը 17.01.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով որոշել է «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից՝ Աճուրդի 3-րդ չափաբաժնի մասով:

«ԽԱՉՊԱՐ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով հայտնել է, որ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված գնային առաջարկով առանձնացված տողով նախատեսել է ՀՀ պետական բյուջե ավելացված արժեքի հարկի գծով վճարվելիք գումար, ընդ որում, մյուս մասնակիցների գնային առաջարկների համեմատ վերջինիս առաջարկը եղել է նվազագույնը: Ընկերությունն իր անհամաձայնությունն է հայտնել «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և վերջինիս առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու Հանձնաժողովի որոշման կապակցությամբ՝ ներկայացրնելով հիմնավորումներ: Ըստ Ընկերության, Հանձնաժողովը «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելով՝ գործել է ոչ իրավաչափ, քանի որ Աճուրդի 3-րդ չափաբաժնով գնման առարկա հանդիսացող «Պրեսեպտ ինդիկատոր-թեստ» ապրանքատեսակը հանդիսանում է 3808 94 ԱՏԳ ԱԱ դասակարգիչ ունեցող ապրանքախմբում ներառված ախտահանիչ միջոց, որի ներմուծումը և շրջանառությունը, համաձայն ՀՀ գործող օրենսդրության, ազատված է ավելացված արժեքի հարկով հարկումից: Ընկերությունը գտնում է, որ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին և ենթակա է մերժման:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ բողոքաբերը պնդեց Բողոքով հայտնած դիրքորոշումն ամբողջությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքի վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

Օրենքի 34-րդ հոդվածի՝

-1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

- 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ)

-32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

-41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով

ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից:

Նույն հոդվածով սահմանված ցանկում ներառված՝ 3808 94 ԱՏԳ ԱԱ ծածկագիրը կրող ախտահանող միջոցների ՀՀ տարածք ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից:

Բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու նպատակով՝ Բողոքներ քննող անձը 04.02.2019թ. գրությամբ դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեին՝ հայտնելով հետևյալ.

««ԽԱՉՊԱՐ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ նաև Ընկերություն/ կողմից 21.01.2019թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին /այսուհետ՝ Բողոքներ քննող անձ/ ներկայացվել է բողոք:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ նաև՝ Օրենք/ 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք /ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը/ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում են առանց նույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

«ԽԱՉՊԱՐ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով հայտնել է, որ «ՆԱԻՐԻ ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված՝ «ՆԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի /այսուհետ՝ նաև Աճուրդ/ շրջանակներում «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի հայտով ներկայացված գնային առաջարկում

առանձնացված տողով նախատեսվել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ավելացված արժեքի հարկի գծով վճարվելիք գումար:

Բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու նպատակով՝ խնդրում եմ Ձեր հանձնարարականը կոմիտեի համապատասխան ստորաբաժանմանը՝ տալ եզրակացություն այն մասին, արդյո՞ք մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, թե՝ ոչ»:

Սակայն, Կոմիտեի կողմից Բողոքներ քննող անձին պատասխան չի ներկայացվել:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

-Աճուրդի 3-րդ չափաբաժնի մասով գնման առարկան է «Պրեսեպտ ինդիկատոր-թեստ» ապրանքատեսակը, որը հանդիսանում է 3808 94 ԱՏԳ ԱԱ դասակարգիչ ունեցող ապրանքախմբում ներառված ախտահանիչ միջոց:

- «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնի մասով ներկայացված վերջնական ընդհանուր գնային առաջարկում առանձնացված տողով ներկայացվել է ԱԱՀ-ի բաղադրիչ:

- Աճուրդի գնահատող հանձնաժողովը «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի հայտը գնահատել է բավարար և վերջինիս ճանաչել է 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած, իսկ այնուհետև՝ ընտրված մասնակից:

- Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հարկերի և նախատեսված վճարների հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրության համաձայն՝ 3808 94 ԱՏԳ ԱԱ դասակարգիչ ունեցող ապրանքախմբում ներառված ախտահանիչ միջոցների ՀՀ տարածք ներմուծումը և շրջանառությունն ազատված են ավելացված արժեքի հարկից:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ն հայտով ներկայացված գնային առաջակում առանձնացված տողով ավելացված արժեքի հարկի բաղադրիչ նախատեսելով՝ ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող տվյալ:

Հաշվի առնելով վերը նշված փաստական հանգամանքները և իրավական հիմքերը՝ Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ Հանձնաժողովը՝ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելով և վերջինիս առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու որոշում ընդունելով՝ գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 20-րդ մասով, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 1-ին կետով և 3-րդ մասով, Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև Հրավերի 5.2 կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ բողոքներ քննող անձը

ՈՐՈՇԵՑ

1. «ԽԱՉՊԱՐ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված Բողոքներ քննող անձին 21.01.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Պարտավորեցնել «Նաիրիի ԲԿ» ՓԲԸ-ի «ՆԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ «ՆԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 3-րդ չափաբաժնի մասով «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ